ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

Հանգուցեալ Միքայէլ Խան-Աղեան Ջալալօղլեցի իւր կենդանութեան ժամանակ արած կտակով պարտաւորացրել է իւր հարազատ եղբայր Աստիճանաւոր Գէորգ Խանաղեանցին ի յիշատակ իւր և իւր հանգուցեալ կին Հեղինէի 1200 բուբլի բաժանել հետևեալ կերպով· 250 բուբլի մեծ Ղարաքիլիսի իւր հիմնած դպրոցին· 100 բուբլի Համամլու գիւղի դպրոցին· Ջալալօղլի գիւղի Ս· Աստուածածին եկեղեցուն 150 ր· Ս· Սարգիս եկեղեցւոյն 100 ր· իսկ մնացեալ 600 բուբլին բաժանել իւր հին չքաւոր ծառաներին և որոց արժան կդատէ հանգուցելոյ եղբայրը։ Այս մասին հանգուցելոյ եղբայր Պ· Գէորգ Խան-Աղեանը տեղեկութիւն տալով Ամենապատիւ Տէր տեղակալին, յայտնում է իւր պատրաստականութիւնը իւր եղբօր կտակը ճշտութեամբ կատարելու։ Տէր լուսաւորեսցէ հոգի հանգուցելոցն Միքայէլի և իւր ամուսին Հեղինէի։

Հոկտ· 5· ձարտարապետ Գրիգոր Փրիգոնեանց այս տարուայ Յունիսի 30-ին ներկայացնում է Տփխիսի Կոնսիստորիային իւր հանգուցեալ հօր գերեզմանի վերայ դնելիք մահարձանի նախարտակը, որ պիտի լինի Տփխիսի Նորաշէնի եկեղեցւոյն պատին կից։ Օգոստոսի 31 յայտարարութեամբ յայտնում է, որ իւր կամքին համաձայն հաստատել է ըստ պատկանելեաց նորա կտակած գումարները, բացի 10,000 բուբլուց, որ իւր հօր ցանկութեան համաձայն ներկայացնելու է ամենայն Հայոց կաթուղիկոսին,

նորա հաստատութիւնից յետոյ, նախապէս խորհրդակցելով այդ դրամների որպիսաբար գործադրութեան մասին։ Վրաստանի և Իմերէթի Հայոց Կոնսիստորիայն ներկայացնելով յիշեալ Փրիդոնեանցի գերեզմանի վերայ դրուելիք մահարձանի նախարտակները, խնդրում է Սինոդից լուծումն։ Սինոդը վերադարձնելով Կոնսիստորիային Գէորգ Փրիդոնեանցի մահարձանի նկարը, պատուիրեց յայտնել հանգուցեալի ժառանգներին՝ դնել իւրեանց հօր գերեզմանի վերայ մի այնպիսի տապանաքար, որպիսին է Լուսիս Մելիքեանինը, Շոլկովնիկովինը կամ Լազարեանինը։

—

Հոկտ. 5. Ըստ թոյլտուութեան Կոնսիստորիայի Հայոց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ, Կարապետ Բէնքլեանցին Ս. Խաչ վանքի սենեակների համար իւրեանից արած ծախս 298 ր. 47 կ. Սինոդը հրամայեց նոյն Կոնսիստորեային հաստատել։

—

Հոկտ. 7 Տփխիսի Հայոց Կոնսիստորիայն սոյն տարուայ Սեպտեմ. 21ին 3140 թ. յայտարարութեան հետ մատուցանելով Սինոդին Բաթումի հայ ժողովրդեան բազմաստորագիր խնդիրը և դպիր Յովսէփ Տէր Պետրոսեանի ծննդեան և ուսման վկայականները, խնդրում է յիշեալ դպրին ձեռնադրել քահանայ Բաթումի հայ ժողովրդեան վերայ։ Սինոդը, յիշեալ Կոնսիստորի միջնորդութիւնը ի նկատի առնելով, հրամայեց ձեռնադրել յիշեալ դպիր Յովսէփ Տէր Պետրոսեանին։

—

Հոկտ. 7. Սինոդը Հմայեակ վարդապետ Տէր Սարգսեանի յայտարարութիւնն ի նկատի առնելով, հրամայեց կարգել յիշեալ վարդապետին Ս. Գեղարդայ վանքի վանահօր բարեշնորհ Յովսէփ վարդապետի գործակից և առանձին առանձին հրամանագրութեամբ պատուիրեց նոցա համերաշխութեամբ գործել յոգուտ վանքի։

—

Հոկտեմբերի 9. Միքայէլ Խանաղեանցից, Մայր Աթոռի՝ Տրփխիսում եղած կրպակի նախկին վարձակալից, և Մայր Աթոռի տան նախկին վարձակալ Գէորգ Յովսէփեանից իբրև

գրաւական մնացած մինը 5% տոմս Տփխիսի առևտրական բանկի № 6154 արժողութեամբ 200 ր. և մի տոմս ևս արևելեան փոխառութեան № 22474 արժողութեամբ 100 ր. կուպոններով հանդերձ դանուումէին Մայր Աթոռի գանձապահի մօտ։ Սինոդը հրամայեց գանձապահ բարեշնորհ Վահան վարդապետին գրել ծախս Մայր Աթոռի արդեանց տումարի մէջ և առաջարկել Սինոդին 300 ր. գումարաւ երկու տոմսերը, առաջինը ղրկելու Տփխիսի առևտրական և երկրորդը Պետերբուրգի Արքունի բանկը և խնդրել այդ գումարը տոկոսով հանդերձ հասցնել Սինոդին։

—

Հոկտ. 12. Շարուր-Դարալագեազ գաւառի Քէշտաշ գիւղացի Կարապետ Յովսէփեան Գիւլնազարեանցը արձակուած լինելով հարկատուութիւնից, որի մասին յայտնել է Երևանի Նահանգապետը անցեալ տարուայ Նոյեմ. 19 ին թ. 8401 գրութեամբ. Սինոդը պատուիրեց Երևանի Կոնսիստորեային յիշեալ Կարապետին ընդունել հոգևորականութեան մէջ և կարգել Քէշտաշ գիւղի եկեղեցուն միմիայն ստորին սպասաւոր։

—

Հոկտ. 12. Ս. Գեղարդայ վանքի վանահայր Վարդան վարդապետ Վարդանեանցը 1891 թուի Մայիս 2 ին թ. 15 յայտարարութեան հետ մատուցանելով Սինոդին Աւագ Ղ.ահրամանեանցի ուսման և արձակման վկայականները, խնդրում է Սինոդին արձակել տալ նրան հարկատուութիւնից և ընդունել ի թիւս միաբանից նոյն վանքի որպէս կուսակրօն հոգևորական։ Որովհետև Աւագ Ղ.ահրամանեանցը դպրոցական ուսումն չունէր, Սինոդը մերժեց Գեղարդի նախկին վանահօր խնդիրը։

—

Հոկտ. 12. Աղհամզալուեցի Աստուածատուր Թադէոսեանը չունենալով ըստ արժանւոյն դպրոցական ուսումն, Սինոդը մերժեց Երևանի Կոնսիստորեայի միջնորդութիւնը, որ արել էր յիշեալ Թադէոսեանին քՀնդ. ձեռնադրուելու։

—

Հոկտ. 12. Աղէքսանդրապոլի փոխանորդ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանցը անցեալ Օգոստոս 5ին թ. 207 յայտարարութեամբ խնդրումէ պատժել Աղէքսանդրապոլցի Բարդուղիմէոս քհնյ. Տէր Յովհաննիսեանցին անձնասպան Արամ Մատակեանցին քրիստոնէավայել յուղարկաւորութեամբ թաղելու համար։ Բարեկարգի յայտարարութիւնից երևումէ, որ բժշկի քննութեան համեմատ, Արամ Մատակեանցի անձնասպանութիւնը առաջ է եկել խելագարութիւնից։ Թէև ըստ սրբութեան օրինաց խելագար Արամ Մատակեանցին հարկաւոր էր թաղել քրիստոնավայել յուղարկաւորութեամբ, բայց որովհետև Բարդուղիմէոս քհնյ. Տէր Յովհաննիսեանը կատարել է այդ առանց գիտութեան մերձաւոր հոգևոր իշխանութեան, Սինոդը հրամայեց Աղէքսանդրապոլի հոգևոր կառավարութեան յիշեալ քահանային յանդիմանել իւր Ատենում և գործը համարել աւարտած։

—

Հոկտ. 12. Սինոդը պատուիրեց Տփխիսի Կոնսիստորիային արձակել Մովսէս քհնյ. Մեծուղեանցին Գօրու Կառավարութեան քարտուղարի պաշտօնից և նորա տեղը նշանակել մի ուրիշ աշխարհական արժանաւոր անձն, պատուիրելով նոյն քհնյին ըստ ամենայն մասանց արթնութեամբ և արիութեամբ կատարել իւրեան հաւատացած ժողովրդեան հոգևոր պէտքերը, նոցա մէջ զարթնեցնելով հայրենի եկեղեցու սէրը, որին հարազատ որդիք են։

—

Հոկտ. 16. Վանական Կառավարութիւնը Յունուարի 27ին թ. 8 յայտարարութեան հետ մատուցանէ Սինոդին 1891 թուի ծախուց ութն ժապաւինեալ մատեան, որից երևումէ, որ Վանական Կառավարութիւնը ստացել է Մայր Աթոռի գանձարանից 106000 բուբլի, ծախսել է Մայր Աթոռի պիտոյից համար 28185 ր. 14 կ. վեհարանի՝ 2044 ր. 27 կ. ճեմարանի՝ 36251 ր. 12 կ. տպարանի՝ 12548 ր. 84 կ. միաբանից ռոճիկ՝ հանդերձագին 9716 ր. 20 կ. նիւթոց՝ 7141 ր. 58 կ. ագարակի՝ 6622 ր. 37 կ. մշակ-

ութեան 3121 ր. 85 կ. ընդամենը 105681 ր. 24 կ։ Գանձարանից ստացած դրամից հանելով ծախսածը, մնում է առ 1-ն Յունվարի 1892 ամի 318 ր. 76 կ։ Ցոդուածների մէջ չկան եղծումներ. համառօտ ցուցակը համեմատէ, ամսական ստուգութիւնք եղել են. կնիքը, ժապաւէնը և տումարի թերթերը ամբողջ են։ Սինոդը, զննած համարելով վանական կառավարութեան ծախուց տումարները և աւարտած՝ հրամայեց տալ դիւանն ի պահեստ։

—

Հոկտ. 16. 1888 թուի ընթացքում ստացել է վանական կառավարութիւնը Մայր Աթոռի գանձարանի 115963 ր. 15 կ. որից ծախսուած է Մայր Աթոռի պիտոյից համար 19892 ր. 48 կ. Վեհարանի՝ 1269 ր. 40 կ. Ճեմարանի՝ 38972 ր. 81 կ. Տպարանի՝ 14353 ր. 10 կ. միաբանից ռոճիկ 9089 ր. 84 կ. ծառայից 7368 ր. 54 կ. մշակութեան 2085 ր. 70 կ. ագարակի 6216 ր. 98 կ. նիւթոց 6770 ր. 45 կ. որից 115019 ր. 34 կ. հանելով գանձարանից ստացած դրամից, առ 1-ն Յունուարի մնում է 943 ր. 81 կ. մնից և ծախուց տումարի յոդուածների մէջ եղծմունքներ չկան, համառօտ ցուցակը համեմատէ, ամսական ստուգութիւններ եղած են, տումարների մէջ թերթերը, կնիքը և ժապաւէնը ամբողջ են։ Սինոդը, զննած համարելով վանական կառավարութեան տումարները, հրամայեց տալ դիւանն ի պահեստ։

—

1887 թուի ընթացքում ստացել է վանական կառավարութիւնը Մայր Աթոռոյ գանձարանից 98631 ր. 43 կ. որից ծախսուում է Մայր Աթոռի պիտոյից համար 17669 ր. 16 կ. վեհարանի՝ 9195 ր. 90 կ. Ճեմարանի՝ 36197 ր. 93 կ. Տպարանի 8595 ր. 24 կ. նիւթերի 3417 ր. 79 կ. Ագարակի՝ 5931 ր. 71 կ. մշակագործութեան 1679 ր. 14 կ. միաբանից ռոճիկ 9171 ր. 23 կ. ծառայից 6173 ր. 84 կ. յոդուածների մէջ եղծմունք չկայ, համառօտ ցուցակը համեմատէ, ամսական ստուգութիւն եղած է, տումարի մէջ ժապաւէնը, թերթերը և կնիքը ամբողջ են։ Սի-

նոգը, զննած համարելով վանական կառավարութեան տոմարները, հրամայեց տալ գիւանն ի պահեստ։

—

1889 թուի ընթացքում ստացել է վանական կառավարութիւնը Մայր Աթոռի գանձարանից 109000, որից ծախսել է Մայր Աթոռի պիտոյից համար 22585 ր. 14 կ. Վեհարանի՝ 14241 ր. 41 կ. Ճեմարանի՝ 31849 ր. 74 կ. Տպարանի՝ 16476 ր. 87 կ. Ագարակի՝ 6 08 ր. 80 կ. Միաբանից ռոճիկ 8359 ր. 80 կ. մշակութեան 2450 ր. 76 կ. Նիւթոց՝ 4458 ր. 44 կ. գանձարանից ստացած գումարից ծախսը հանելով, մնում է 1769 ր. 4 կ. ծախուց և մտից տոմարների յօդուածների մէջ եղծմունք չկայ, ամենայն ստուգութիւն եղած է, համառօտ ցուցակը համեմատէ. կնիք, ժապաւէն և թերթերը ամբողջ են։ Սինոդը, զննած համարելով վանական կառավարութեան տոմարները, հրամայեց տալ գիւանն ի պահեստ։

—

1890 թուի ընթացքում ստացել է վանական կառավարութիւնը Մայր Աթոռի գանձարանից 114000 ր. որից ծախսուել է Մայր Աթոռի պիտոյից համար 26403 ր. 23 կ. Վեհարանի՝ 12579ր. 74 կ. Ճեմարանի՝ 38720 ր. 8 կ. Տպարանի՝ 16307 ր. 55 կ. Ագարակի՝ 5914 ր. 67 կ. Միաբանից ռոճիկ 7809 ր. 81 կ. Նիւթոց՝ 3176 ր. 28 կ. մշակութեան՝ 2784 ր. 30 կ. գանձարանից ստացած գրամներից հանելով ծախսը, մնում է 304 ր. 34 կ։ Մտից և ծախուց յօդուածներում եղծուած չկայ, ստուգութիւն եղած է, համառօտ ցուցակը համեմատէ, տոմարներում կնիք, ժապաւէն և թերթերը ամբողջ են։ Սինոդը, զննած համարելով կառավարութեան տումարները, հրամայեց տալ գիւանն ի պահեստ։

—

Հոկտ. 16. 1884 թուի թ. 61 Սինոդի հաշուարարական մասում կազմուած գործից երևում է, որ Ս. Աթոռի կալուածների նախկին կառավարիչ գեր. Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան,

(այժմ հանգուցեալ) փաստաբան պ. Գրիգոր Բոյաջեանցից ստա-նալով 238 րուբլի ի հաշիւ պարտուց նազլորնի սոխեանին Աս-տուածատուր Անուշեանի, այդ դրամները չէ հասցրել Սինո-դին զանազան պատճառաբանութեամբ, ուստի Սինօդը հրամա-յեց, որովհետև Աստրախանի առաջնորդ Ստեփաննոս եպիս-կոպոսը վախճանուած է, հանգուցեալի կայքից հանել այդ դրամները և գործը համարել աւարտած և տալ դիւանն ի պա-հեստ։

—

Հոկտ. 16. Սրբազան Սինօդը պատուիրում է Հաշուատարական մասին Սինօդում կազմած Տփխիսեցի հանգուցեալ Բէգլար Փեր-շակեանցի 1890 թուին Սուրբ Էջմիածնին նուիրած 500 րուբլի. կտակի երկու գործերը ընդ համարաւ 45 և 80՝ միաւորել։

—

Հոկտ. 19. Տփխիսի Հայոց կոնսիստորեայի Օգոստոս 15. Թ. 2660 և Սեպտեմ. 21 և 30. Թ. 3141 և 3287 յայտարարու-թեանց համեմատ, Սինօդը պատուիրեց նոյն կոնսիստորեային թոյլ տալ մտնել ամուսնութեան Լալի գիւղացի Յակոբ Յովհան-նիսեանցին Նատալիա Ղազարեանցի հետ, Քութայիսեցի Ստե-փաննոս Միքայէլեան Քալանթարեանցին Մարիամ Յովհաննի-սեանցի հետ և Գանձակեցի այրի Ստեփաննոս Տէր Յովհաննի-սեանցին այրի Հռիփսիմէ Մերզլինեանցի հետ՝ երեքն ևս խնա-մէական հինգերորդ աստիճանի։ Եւ Երևանի կոնսիստորեայի Սեպտեմ. 2 և 21. Թ. 2077 և 2197 յայտարարութեան հա-մեմատ՝ պատուիրեց թոյլ տալ Ցղնեցի Մինաս Մինասեանցին Սալ-բինալ Եղիազարեանցի հետ և Նոր Բայազետցի Ալէքսանդր Բա-գալեանին Լուսիկ Մկրտչեանի հետ. նոյնպէս խնամէական հին-գերորդ աստիճանի։

—

Հոկտ. 19. Ս. Էջմիածնի վանական կառավարութեան Հոկտ. 5 138 Թ. յայտարարութեան համաձայն, Սինօդը հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ Մայր Աթոռի, ճեմարանի և Տպա-

բանի ծախուց համար յընթացս Հոկտ. ամսի 12,000 բուբլի որ անցեալ ինն ամիսների ընթացքում ստացած 74000 բուբլու հետ կանէ 86000 բուբլի։

—

Հոկտ. 19. Վրաստանի և Իմերէթի Հայոց Կոնսիստորիայն 1884 թուին Յունուար 18ին յայտարարութեամբ մատուցանէ Սինոդին Թելաւեցի Գասպար Մարգարեանի կտակից քաղուածի պատճէնը, որ նա իթիւս այլոց, Մայր Աթոռին կտակած է Թելաւումն եղած իւր քարաշէն կրպակի մի մասը, որին տիրելու իրաւունք ունի Մայր Աթոռը իւր մահուանից յետոյ։ Սինոդը 1886 թուի Յուլիս 23ին օրագրութեամբ պատուիրումէ սոյն Կոնսիստորիային ժամանակին կտակած կալուածը առնել հոգևոր իշխանութեան տեսչութեան տակ և աւարտած համարելով այդ գործը, տալ դիւանն ի պահ։

—

Հոկտ. 19. Որովհետև հին Նախիջևանի հոգևոր կառավարութիւնը տարւոյս Փետրվարի 7ին 124 թ. յայտարարութեամբ հաստատել է Սինոդին Քիւլթափեցի հանգուցեալ Մկրտիչ Սահրատեանի յօգուտ Մայր Աթոռի կտակած 30 բուբլին. Սինոդը հրամայեց գործը աւարտած համարել և տալ դիւանն ի պահ։ Որովհետև Թմբուլ գիւղացի Անտոն աւագ քհնյ. Տէր Սարգսեանի կտակած ութսուն բուբլին. 50 ր. Մայր Աթոռին և 30 յօգուտ Թմբուլի եկեղեցւոյն, Նախիջևանի հոգևոր կառավարութիւնը ստացած և հաստատած է ըստ պատկանելեաց, Սինոդը հրամայեց գործը աւարտած համարել և տալ դիւանն ի պահ։

—

Հոկտ. 19. Սինոդի Տեարք անդամք նկատելով որ, 1200 ր. ռոճկով դժուարին է Երևանի թեմական փոխանորդ բարձրապատիւ Կիւրեղ վարդապետին հոգալ սննդեան անհրաժեշտ պիտոյքը, ընդունել բազմաթիւ հիւրեր, Մայր Աթոռի միաբաններին և ուրիշ կողմերից եկած հիւրերին, որոնք իջևանումեն նո-

բա մծա, ուստի Սինոդը հրամայեց բարձրապատիւ Կիւրեղ վարդապետի ռոճկի վերայ աւելացնել այլ եւս 400 բուբլի նոյեմբեր ամսի 1-ից։

—

Հոկտ. 19. Շուշի քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցու ժողովուրդն և քահանայք Սեպտեմ. 10 և 22-ին ուղարկումեն Սինոդ երկու խնդիր, մինով խնդրումեն Ծխաբերդ գիւղի ժողովրդեան համար ձեռնադրուած Բարսեղ Տէր Մելքիսեդէկեանին կարգել Մեղրեցւոց եկեղեցւոյն քհնյ, միւսովն թէ՝ Բարսեղ Տէր Մելքիսեդէկեանցը ձեռնադրութիւնից յետոյ, փոխանակ գնալու Ծխաբերդ գիւղը, մնումէ Շուշի և քահանայագործութիւն է անում Մեղրեցւոց եկեղեցում, որտեղ քահանայի կարօտութիւն չկայ, խնդրումեն հեռացնել նորան և ազատել ժողովրդին ու քահանաներին խռովութիւններից, որովհետև Տէր Մելքիսեդէկեանցը իւր ոտորագրութեամբ պարտաւորուած է մինչև մահ մնալ Ծխաբերդ գիւղում և այնտեղ քահանայագործութիւն անել։ Սինոդը հրամայեց Ղարաբաղի կոնսիստորիային նախ՝ անյապաղ դրկել Տէր Մելքիսեդէկեանցին Ծխաբերդ՝ հովուելու ժողովրդին, որի վերայ ձեռնադրուած է, և երկրորդ՝ շուտով Սինոդին տեղեկութիւն տալ, թէ՝ Տէր Մելքիսեդէկեանցը որ եկեղեցում մատուցել է առաջին Ս. պատարագը և որի թոյլտուութեամբ նա այժմ քահանայագործութիւն է անում Շուշի քաղաքում։

—

Հոկտ. 19. Վրաստանի և Իմերէթի Հայոց կոնսիստորիայի յայտարարութեան համաձայն, Սինոդը հրամայեց մնանկացած Գէորգ Ցոլսէփեանից յօգուտ Մայր Աթոռի պահանջած դրամների մասին կարճել գրագրութիւնները իբրև անօգուտ և գործը աւարտած համարելով՝ պատուիրել տալ դիւանն ի պահ։

—

Հոկտ. 19. Շուշի քաղաքի Ագուլեաց Ս. Աստուածածին եկեղեցու միաբան Յովհաննէս քհնյ. Թառումեանցը յանուն Վ.Հ.

կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. Մակարայ 1887 թուի Յուլիս 30ին և Նորին սրբութիւնից նոյն թուի Օգոստոս 10ին թ. 405 մակագրութեամբ յանձնուած Սինոդի անօրէնութեան, յայտարարութեան հետ մատուցանումէ իւր կտակի պատճէնը, գրուած Օգոստոս 5ին 1886 թուին, որով ի թիւս այլոց կտակումէ յօգուտ Ս. Էջմիածնի միաբանների 400 ր. և ճեմարանի 200 ռուբլի։ Որովհետև այդ կտակը նոտարական կարգաւ չէր կազմուած և կտակած դրամները վճարուելու են մահից յետոյ, եթէ նա իւր կենդանութեան ժամանակ չփոխի կտակը, ուստի Սինոդը Յուլիսի 10ին 1891 թուին թ. 2316 կտակի պատճէնը ուղարկեց Ղարաբաղի Կոնսիստորիային իւր գործերի մէջ ունենալու և հսկելու, հետամուտ լինել ի կատար ածելու և ժամանակին արդիւնքը յայտնել Սինոդին։ Յովհաննէս քհնյ. Թառումեանցի կտակի հսկողութիւնը յանձնուած լինելով Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիային, Սինոդը հրամայեց գործը աւարտած համարել և տալ գիւանն ի պահեստ։

—

Հոկտ. 19. Վանական կառավարութիւնը Հոկտ. 5. 139 թ. յայտարարութեան համեմատ, հրամայեց Մայր Աթոռի Գանձապահին տալ միաբանից սենեակների շինութեան համար 5000 ր., որ անցեալ ամիսների ընթացքում ստացած 21000 ռուբլու հետ կանէ 26000 ռուբլի։

—

Թ. 650 Յունիսի 22-ին Կարսի Հոգևոր կառավարութիւնը անցեալ տարի յայտնումէ Սրբազան Սինոդին, որ Անիում վերաբերնակող Ղութինի գիւղացի Խաչատուր և Վարդան Շահպազեան երկու եղբայրները Անի քաղաքի վանահայր Ներսէս վարդապետի վնասակար գործողութեանց մասին բողոքելուց յետոյ, տարեկան 300 ռուբլիով ինն տարի ժամանակաւ խնդրումեն վարձով տալ իրենց Անիի 100 օրաւոր հողը, որոնք և խոստանումեն անել Անիում ինչ ինչ կարևոր նորոգութիւններ, այն է՝ պարսպի աւագ դռնից սկսած մինչև Մայր եկեղեցին և սենեակները տա-

նող ճանապարհը կանոնաւոր կերպով հարթել։ Սրբազան Սինոդը յիշեալ վանահօր տումարը երբ առնում է ղննութեան և տեսնում՝ որ 1885—1890 թէ այդ հողերից՝ թէ տեղւոյն բանջարանոցից՝ և թէ գանձանակադրամ և նուիրատուութիւնք միայն եղել են 1514 ռ. 94 կ. և ծախք՝ 1500 ռուբլի և հերկելի հողերից 3 խալուար և 17 լիտր ցորեն՝ ահա այս աննշան արդիւնքը ի նկատի ունենալով՝ պատուիրում է յիշեալ կառավարութեան օրինաւոր սակարկութեամբ 100 օրավար հողը տալ վարձով և հաստատութեան համար դաշնագիր ուղարկել Սինոդ։ Կառավարութիւնը Ս. Սինոդի այս պատուէրի համաձայն իւր յայտարարութեան հետ առաջարկում է մի դաշնագիր՝ որով յիշեալ Շահպազեան երկու եղբայրներին հինգ տարի ժամանակով այդ հողերը տրուած է լինում տարեկան 150 ռուբլի վճարով։ Այս մասին դեռ ոչ մի բան չտնօրինուած Սինոդի կողմից՝ նոյն կառավարութիւնը ուղարկում է Սինոդ և տեղւոյն վանահօր մի յայտարարութիւնը՝ որով խնդրում է նա այդ հողերը նոյն վարձով թողնել իւր վերայ։ Սրանից յետ Սրբազան Սինոդը պահանջում է կառավարութիւնից բացատրել՝ թէ ինչու յիշեալ հողերի սակարկութիւնը չէ արել երեք հարիւրով՝ այլ թողել է 150 ռուբլիով խաչատուր Շահպազեանի վերայ՝ մինչդեռ նա և իւր եղբայր Վարդանը խնդրում էին տալ իրենց 300 ռուբլիով և խոստանում՝ որ ինչ ինչ նորոգութիւններ էս կանեն Անիում։ Այս մասին կառավարութիւնը յայտնում է՝ որ սակարկութիւնը միայն 100 օրավար հողի համար է եղած և բանջարանոցի հետ ամբողջ տարածութիւնն է 195 դեսիատին և թէ Շահպազեանին դարձեալ յանձնում են վճարել այդ հաշուին տարեկան 400 ռուբլի՝ իսկ 100 օրավարի համար տալիս են մեզ աւելի քան 150 ռուբլի։ Ըստ այսմ Սինոդը անօգուտ համարելով այդ հողերի վարձով տալը՝ հեռագրում է Կարսի փոխանորդին դարձեալ թողնել նրանց վանահօր տեսչութեան տակ։

—

7 Ապրելի 1883՝ թ. 986 Տփխիսի Կոնսիստորիայն մի յայտարարութեան հետ ներկայացնելով Սինոդին տեղւոյն Առաջնորդա-

բանի նորոգութեան լինելիք 5834 ռուբլի ծախուց նախահաշիւը, թոյլտուութիւն է խնդրում անել այդ նորոգութիւնը վիճակային արդիւնքով։ Սինոդն ընդունելով այս առաջարկութիւնը, պատուիրում է Կոնսիստորիային՝ 3000 ռուբլի շինութեան վերայ ծախսել վիճակային արդիւնքից, իսկ մնացեալը հոգալ ուրիշ աղբիւրներով կամ գերապատիւ առաջնորդի ժողոված նուէրներով։ Սրանից յետոյ, երբ Սրբազան Սինոդը նոյն Կոնսիստորիայի՝ 1885 և 1886, թիւ 1720 և 1189 իրեն առաջարկած երկու յայտարարութիւններից նկատում է, որ յիշեալ առաջնորդարանի վերայ իւր թոյլ տուածից պակաս է ծախսուել՝ 4086 ռուբլի և 36 կոպ. և այն սուրբ Աթոռի և այլ հաստատութեանց դրամներով, երկու անգամ Պատուիրում է լրացնել այդ գումարը ուրիշ աղբիւրներից և նուէրներից, և երբ Կոնսիստորիայն յայտնում է, թէ արդէն աւարտուել է նորոգութեան գործը և թէ նորա ծախքը՝ որ հոգացուել է յիշեալ հաստատութեանց փողերով և լրացուած է վիճակի արդիւնքով։ Սրբազան Սինոդը 16 Հոկտ. տարւոյս իւր օրագրով առաջնորդարանի այս գործը համարում է աւարտուած, որի մասին և տեղեկութիւն է տալիս նոյն Կոնսիստորիային։

—

26 Հոկտ. 1884. թ. 2822 Սինոդի առաջարկութեան համաձայն Տփխիսի Կոնսիստորիայն նոյն քաղաքի «Վերայի» մասում գտնուած Էջմիածնապատկան այգին 6 տարի ժամանակաւ այն է՝ 1 նոյեմբ. 1884, ց 1 նոյեմ. 1890, տարեկան 400 ռուբլիով տալիս է դաշնագրով վարձով Նիկողայոս Գոգոյեանցին և Եաղօր Բերզինեանցին, որոնցից և ստանում է 200 ռուբլի կանխիկ գրաւական։ Սակայն վարձակալները ըստ իրենց դաշնագրի անձեռնհաս գտնուելով վճարել վարձից 606 ռուբլի, Կոնսիստորի բողոքի համաձայն Տփխիսի նահանգական դատարանը վճռում է ստանալ նրանցից 1106 ռուբլի, 606 ռուբլին իբրև այգու վարձ իսկ 500-ը իբրև տուգանք։ Սակայն նոյն Կոնսիստորիայն երբ հաւատարիմ մարդոց ձեռքով ստուգում է, որ Բերզինեանցն արդէն անյայտացել է և Գոգոյեանցն ևս գտնվում է ողորմելի

վիճակի մէջ, որից և նախապէս ստացուել է 150 ռուբլի, ներկայացնելով Ս. Սինոդին 200 ռուբլի գրաւականը, հաղորդում է նրան այս ամեն տեղեկութիւնները և խնդրում դադար տալ այդ գործին։ Սրբազան Սինոդը մարդասիրաբար բաշխում է նրանց պարտքը և այս մասին եղած գործը 16 Հոկ. տարւոյս համարում է աւարտած, որի մասին տալիս է տեղեկութիւն նոյն կոնսիստորիային։

—

Շուշի քաղաքի Մեղրեցւոց սուրբ Աստուածածին եկեղեցւոյ երեսփոխան Մովսէս Շահնազարեան՝ նոյն եկեղեցւոյ ժողովրդոց համաձայնութեամբ եկեղեցական արդիւնքից ծախսում է եկեղեցւոյ խարխուլ դարպասի և ինչ ինչ շինուածոց վերայ 2067 ռ. 27 կոպ., այն ինչ կոնսիստորիայի թոյլտուութեամբ նա միայն դարպասի վերայ պիտի ծախսէր 300 ռ.։ Կոնսիստորը տեսնելով, որ յիշեալ երեսփոխանը իւր կամքին հրաժարուելուց յետ ժողովրդոց համաձայնութեամբ մնացեալ ծախքը արել է ինքնագլուխ և առանց հոգևոր իշխանութեան թոյլտուութեան, այս մասին խնդրում է Ս. Սինոդի տնօրէնութիւնը։ Սրբազան Սինոդը ձեռք բերած հաշուեմատեանից ստուգելով, որ նա այդ ծախքը արել է ժողովրդոց համաձայնութեամբ, ուստի պատուիրում է կոնսիստորիային այս անգամ օրինաւոր ընդունել այդ ծախքը, միայն թէ այսուհետև երեսփոխանները եկեղեցական գումարով մի որ և իցէ ծախք անելու համար գրաւոր ժողովրդեան համաձայնութիւնը ստանալուց յետ, վիճակային իշխանութեան միջոցաւ այդ իսկ ժամանակ պիտի խնդրեն և Սինոդի թոյլտուութիւնը։

—

28 Օգոստ. 1890 համար 3606 Երևանի կոնսիստորիայի յայտարարութեան համաձայն 19 Հոկտեմբերի տարւոյս Ս. Սինոդը պատուիրեց նոյն կոնսիստորիային վաւերական համարել և ի կատար ածել Աղուլեցի Հայրապետ Խոջամիրեանի Բաբայեան Գինովաբէյի հետ խնամեկան 5-րորդ աստիճանի պսակը, իսկ Օրդուբաթցի Ղևոնդ քհնյ. Բալայեանցին, այս պսակի առթիւ Գոր-

նեաց գործակալի տուած հրամանը մի հնարքով ափ ձգելու և պակեալներից ապագային շահուելու նպատակաւ իւր մօտ պահելու համար, Կոնսիստորեայի խնդրանաց համաձայն, փոխանակ յանդիմանելու, նորա այս անկարգութեանց համար ի նպաստ Մայր Աթոռի տանալ 25 բուբլի տուգանք։

—

1883 թուին Երևանի Կոնսիստորիայն յայտնումէ Արբազան Սինոդին, որ Երից-վանիկ գիւղի Տէր Ցարութիւնեան Գէորգ քահանան առանց հրամանի կատարել է այլ և այլ աստիճանի խնամութեան ուրիշ ծխատէր քահանաների պակներ, վասն որոյ և խնդրումէ յիշեալ արբեցող և անպատկառ քահանային երեք տարի ժամանակաւ ուղարկել Սևան ապաշխարելու։ Սինոդի պահանջման համեմատ Կոնսիստորիայն քննիչ, վարքի և նորա սրած զեղծմանց համար կրկին ճիշտ և օրինաւոր քննութիւն տալով, նորա 1888 թուի Սինոդին ուղարկած քննական գործերից երևումէ, որ յիշեալ քահանայն, իսպառ մոռանալով իւր քահանայութեան կոչման պատիւը, գաղել է նաև 14 պակների Աթոռիս հասանելի արդիւնքը, և այն ժամանակ է տուել նոցա պակատէրերին հրաման, երբ ինքը դեռ շատ վաղ հրաժարուած է եղել գործակալութիւնից և այս գողութիւնն պատիպատ պատճառներով խոստովանումէ և ինքն։ Բացի սորանից՝ դարձեալ առանց հոգևոր իշխանութեան հրամանի կատարելով չորս ազգականութեան աններելի պակներ՝ դարձեալ իւրացուցել է Մայր Աթոռիս հասանելի արդիւնքը։ Տաթևի հոգևոր կառավարութեան Կոնսիստորեայի ուղարկած մի յայտարարութիւնից երևումէ, որ այս քահանայն իւր ապերասան վարքով և համարձակ և անհանգիստ բնաւորութեամբ ոչ միայն չէ ճանաչել իրաւունք և պարտք, այլ և դարձեալ ինքնագլուխ կատարել է մի ուրիշ քահանայի պակ, ամուսնացնելով 16 տարեկան մի պատանի մի աղջկայ հետ, որոնցից և ստացել է 8 բուբլի պակագրամ և ներկայացրել Կառավարութեան 4 ր։ Ուստի յիշեալ քահանայի այսպիսի բազմապատիկ գաղակղեցի արարմանց համար Ս. Սինո-

գը որոշեց ուղարկել նոյան Սեւան ապաշխարելու, իսկ նորա գաղած գրամների փոխարէն ստանալ 130 ր. յատկացնելով իւր ծխից եկած արդիւնքի երկու մասը ի սնունդ իւր ընտանեաց, իսկ մի մասը հովուող քահանային։